Լաուրա Գալստյան
ԿԸՀ նախագահի տեղակալ

Ծնվել է 1966թ. հունվարի 2-ին Սպիտակում:
1988թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:
2008թ. ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:
1989-1991թթ. աշխատել է ՀՍՀ Պետագրոարդի հանրապետական գլխավոր հաշվողական կենտրոնում որպես ինժեներ-ծրագրավորող:
1991-1995թթ. աշխատել է Հայկական Կարմիր Խաչի ընկերությունում որպես հաշվապահ:
1995-1997թթ. եղել է «Սփյուռ» ՍՊԸ-ի տնօրենի օգնական:
1998-2002թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչությունում որպես առաջատար մասնագետ, ապա՝ վարչության պետի օգնական, գլխավոր մասնագետ:
2003-2004թթ.՝ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ:
2004-2006թթ. զբաղեցրել է ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետի պաշտոնը:
2006-2011թթ. զբաղեցրել է ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետի պաշտոնը:
2011թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ընտրվել հանձնաժողովի նախագահի տեղակալ:
Ամուսնացած չէ: